ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 հուլիսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

89
(2939)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԼԵՆԱ ՆԱԶԱՐՅԱՆԸ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԽՆԴՐԵԼ



ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Ես՝ Լենա Ռաֆայելի Նազարյանս, 03.06.2021թ. ՀՀ ԱԺ արտահերթ նիստի ընթացքում իմ կողմից Թագուհի Մանվելի Թովմասյանի հասցեին հնչեցված «իդիոտկա» վիրավորական արտահայտության համար ներողություն եմ խնդրում Թագուհի Մանվելի Թովմասյանից:

Կոակոs

115/7116/ 29 հունիս 2024 շաբաթ

2021 թվականի մայիսի 3-ին ՀՀ ԱԺ անկախ պատգամավոր Թագուհի Թովմասյանը ԱԺ ամբիոնից քննադատեց Նիկոլ Փաշինյանի իշխանությանը, որ Աբովյանի դիահերձարանում զինծառայողների դիակները պարկերով լցրել էին գետնին, ու որեւէ մեկը այդպես էլ այդ ազգային ամոթի համար պատասխանատվության չենթարկվեց: Այս ելույթից հետո ԱԺ նիստը նախագահող Լենա Նազարյանը, բարձրախոսը միացրած, վիրավորեց ընդդիմադիր պատգամավոր Թագուհի Թովմասյանին՝ «իդիոտկա» վիրավորական բառով:

Հենց նույն դահլիճում որպեսզի հետո Թագուհի Թովմասյանը պահանջեց Լենա Նազարյանից, որ ներողություն խնդրի, սակայն Նազարյանը հրաժարվեց կատարել պահանջը՝ավելի բարդացնելով իրավիճակը: Ընդդիմադիր պատգամավորը դիմեց դատարան: Դատարանում Լենա Նազարյանը իր փաստաբանի միջոցով փորձեց ապացուցել անհնարինը, թե «իդիոտկա» բառը վրավորանք չէ, նշանակում է «առաջնորդ», եւ Նազարյանը չի ցանկացել վիրավորել. ինչպես նաեւ մեծ փոխհատուցում վճարելուց խուսափելու համար՝ Նազարյանի փաստաբանը դատավորներին ներկայացնում էր Լենա Նազարյանի ֆինանսական վիճակը, թե վարկեր ունի, չի կարող մեծ տուգանքներ վճարել:

Ի վերջո, եռաստիճան դատական համակարգում Թագուհի Թովմասյանը հաղթեց բոլոր ատյաններում եւ հիմա՝դեպքից 3 տարի անց, Լենա Նազարյանը, դատարանի պահանջով, «Առավոտ» օրաթերթում հրապարակել է ներողության տեքստը, ինչպես նաեւ պետք է վճարի փոխհատուցում Թագուհի Թովմասյանին վիրավորելու համար: Դատարանը բավարարել է 300 հազար ՀՀ դրամի փոխհատուցումը, քանի որ առավել մեծ գումար վճարելու հնարավորություն ՔՊ պատգամավորը չունի:

Իսկ իրականում, այդ ընթացքում Նազարյանը Ծաղկաձորում բնակարան է գնել, եւ, ըստ պաշտոնական հայտարարագրի, Նազարյանի դրամական միջոցները մի քանի անգամ ավելացել են վերջին տարիներին:

Հշխանական «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, ընդդիմադիր հայացքներ ունեցող գործիչների ու քաղաքացիների նկատմամբ ճնշումների գործադրումն ու բիրտ ուժ կիրառելը խրախուսելու համար, ամեն առիթի պարգեւատրում ու շնորհակալագրեր է հանձնում բռնարարներին: Նախ հունիսի 12-ին՝ Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկում «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման ակցիայի ընթացքում հատուկ միջոցներ կիրառելուց անմիջապես հետո, ոստիկանները ՀՀ պետբյուջերի միջոցներից դրամական պարգեւ ստացան, հիմա էլ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն է որոշել խրախուսել բռնարարներին: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ ԱԺ պաշտոնական կայքից տեղեկացավ, որ Ալեն Սիմոնյանը ծառայողական պարտականությունները գերազանց եւ բարձր պատասխանատվությամբ կատարելու համար Պետական պահպանության ծառայության աշխատակիցներին պարգեւատրել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի հուշանվերով՝համաձայն 1-ին հավելվածի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի շնորհակալագրով: Հետ գնացինք լրահոսով՝պարզելու, թե այս օրերին ԱԺ ՊՊԾ աշխատակիցներն ինչով են աչքի ընկել: Պարզեցինք, որ նրանք, օրինակ, ԱԺ-ում լրագրողների աշխատանքը խոչընդոտելով, լրագրողների համար սահմանված օթյակից նրանց ապօրինաբար դուրս հանելով են զբաղված եղել, ինչպես նաեւ խոչընդոտել են ընդդիմադիր պատգամավորների մուտքը իրենց աշխատավայր՝Ազգային ժողով, դարձյալ հունիսի 12-ին: Ահա, թե ինչի համար է Ալեն Սիմոնյանը որոշել խրախուսել ՊՊԾ աշխատակիցներին, որպեսզի մյուս անգամ ավելի մեծ ոգեւորությամբ նրանք պաշտպանեն ՔՊ-ական, ինչպես ասվում է, «դավաճան» իշխանություններին:

Հայ գերիների մասին հրապարակումներ համացանցում կգտնեք միայն 2024 թվականի տարեսկզբին: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերջին անգամ գերիների մասին հիշատակել է ՀՀ Ազգային ժողովի իր մի քանի հայտարարություններում, զրույցներում: Մարտի 12-ի ասուլիսում Նիկոլ Փաշինյանը «Ժողովուրդ» օրաթերթի՝գերիների մասին հարցին ի պատասխան, նշեց, որ ունեցել է զրույցներ հենց այդ օրը՝առավոտյան, բայց ում հետ եւ կոնկրետ ինչի մասին այդպես էլ չասաց: ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը գերիների մասին հիշատակումներ արել է 2023 թվականի տարեկան ամփոփիչ զեկույցի ընթացքում: «Ժողովուրդ» օրաթերթը, խախտելով պատասխանատուների լռությունը, փորձեց ստանալ կոնկրետ հարցերի պատասխաններ: Արտգործ նախարար Արարատ Միրզոյանին հստակ հարցրել ենք. «Պարոն Միրզոյան, թե՛ Դուք, թե՛ վարչապետ Նիկոլ Փաշինյանը քանիցս հրապարակային նշել եք, որ Ադրբեջանում պահվող հայ գերիների վերադարձի ուղղությամբ ամենօրյա աշխատանք է տարվում: Չնայած սրան, որեւէ աշխատանք տեսանելի չէ. վերջին շրջանում այդ հարցի վերաբերյալ որեւէ հիշատակում նույիսկ չկա, անգամ՝ պաշտոնական հաղորդագրություններում: •Արդյոք հարցը շարունակո՞ւմ է մնալ օրակարգում, եւ ի՞նչ քայլեր են ձեռնարկվում միջազգային ասպարեզում՝ Բաքվում պահվող 23 հայ գերիների եւ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության վերադարձի համար: •Արդյոք անհրաժեշտություն չկա՞ հրապարակային որոշ քայլերի եւ միջոցների, որպեսզի միջազգային գործընկերները, կամ իրավապաշտպան միջազգային կազմակերպությունները, հիմնվելով պաշտոնական Երեւանի հրապարակային հայտարարության վրա, իրենց ձայնը միացնեն եւ խնդրին ավելի լայն հնչեղություն տան: •Արդյոք գերիների վերադարձի հարցը ներառվա՞ծ է հայ-ադրբեջանական ընթացող բանակցությունների եւ խաղաղության պայմանագրի համատեքստում»: Տեղեկատվության ազատության մասին օրենքի համաձայն՝ սահմանված ժամկետում ձեւակերպված ծավալուն հարցերի համար ստացանք հետեւյալ ընդհանրական պատասխանը: «...Ադրբեջանի կողմից հայ ռազմագերիների եւ պատանդառության մեջ անօրինական պահվող քաղաքական անձանց ազատ արձակման խնդիրը հայկական կողմի համար առաջնահերթություն հանդիսացող հրատապ մարդասիրական հարց է, որի ուղղությամբ մշտապես աշխատանք է տարվում»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



Երեկ ՀՀ գլխավոր դատախազությունից շատ դատախազներ խիստ սրտնեղած են դուրս եկել: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության դատախազության կազմավորման 106-ամյակի եւ Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ Գլխավոր դատախազությունում տեղի էր ունեցել Դատախազության կոլեգիայի հանդիսավոր նիստ, որին մասնակցել էր վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, գլխավոր դատախազի տեղակալները, Դատախազության կոլեգիայի անդամները, շատ դատախազներ եւ այլք: Արդյունքում՝ դատախազներից ոմանք արժանացել են շնորհակալագրերի, իսկ ՀՀ մյուս դատախազներին էլ հանդիսավոր նիստի ավարտին, ՀՀ գլխավոր դատախազի հրամանով, տրվել են շնորհակալագրեր, պարգեւատրել են հուշանվեր-ժամացույցներով, «ՀՀ դատախազության 105-ամյակ» հոբելյանական մեդալով, «ՀՀ դատախազություն» կրծքանշանով, երկու դատախազի շնորհվել է արտահերթ դասային աստիճան:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ԱԴՐԲԵՋԱՆԸ ՁԳՁԳՈՒՄ Է ԳՈՐԾԸՆԹԱՑԸ»

ArmLur.am-ի հետ զրույցում «Հանրապետություն» կուսակցության անդամ, Միջազգային իրավունքի մասնագետ Արսակ Զեյնալյանն անդրադարձել է մամուլում շրջանառվող տեղեկություններին, որ Ադրբեջանը դահանջում է Հայաստանից հրաժարվել միջազգային ատյաններում իր դեմ ներկայացրած հայցերից:

-Պարոն Զեյնալյան, Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ այժմ Տավուշում տեղի ունեցող գործընթացը հաջորդիվ շարունակվելու է նաեւ Սյունիքում, բայց, մյուս կողմից էլ, իշխանությունները հայտարարում են, որ սահմանազատումն ու սահմանագծումը դեռ վերջնական երաշխիք չէ, որ Ադրբեջանը նոր սադրանքների չի գնա. եթե այս իրավիճակն է, եւ որեւէ երաշխիք չկա, Ձեզ համար այս շտապողականությունը հասկանալի՞ է, եթե որեւէ իրավական հիմք չկա, ինչի՞ հիման վրա է այս գործընթացն իրականացվում:

-Իրավական հիմք կա, դա Ալմաթիի հռչակագիրն է եւ Հայաստանի օրենսդրությունը, նաեւ Ադրբեջանի օրենսդրությունը եւ այն միջազգային պայմանագրերը, որոնց հիման վրա պետությունները հարաբերվում են: Հայաստանի անվտանգությունը միակոմպոնենտ երեւույթ չէ, բազմակոմպոնենտ է, եւ այս բոլորը պետք է համադրել իրար: Դրանցից մեկը եւ իրավական լեգիտիմությունն է, մյուսը՝ ռազմական պոտենցիալների համադրելիությունը, ռազմական-քաղաքական բալանսը, եւ այս ամբողջը պետք է զարգացնել, որպեսզի Հայաստանը լինի անվտանգ, սահմանները լինեն անձեռնմխելի:

-Պարոն Զեյնալյան, բայց եթե երկրի ղեկավարը անձամբ հայտարարում է, որ Ադրբեջանը մեզ երաշխիք չի տալիս, եւ դեռ ավելին՝ հակառակ պատկերն ենք տեսնում, որ օրինակ՝ այս ֆոնին Ադրբեջանը ասում է, որ «մինչեւ սահմանադրությունը չփոխեք, խաղաղության պայմանագիր չի կնքվի», ու անընդհատ նոր պահանջներ է դնում:

-Ադրբեջանի գործը չէ մեր սահմանադրությունը եւ, միջպետական պայմանավորվածության համաձայն, Հայաստանը եւ Ադրբեջանը նախագծում ֆիքսվել են, որ որեւէ կողմ չի կարող հղում անել սեփական օրեսդրության վրա, այդ թվում՝ սահմանադրության վրա: Եվ, ինչպես Հայաստանի Հանրապետությունն է պարտավոր պահպանել իր պայմանավորվածությունը դրա վերաբերյալ, այնպես էլ Ադրբեջանը, իսկ թե մենք ինչպես այդ խնդիրը կլուծենք, դա մեր խնդիրն է. իսկ Ադրբեջանի կողմից կատարած հայտարարությունները՝ սահմանադրության եւ այլնի վերաբերյալ, նպատակ են հետապնդում ձգձգելու, հարմարեցնելու գործընթացը, նաեւ տեսնելու համար, թե ինչ է տեղի ունենալու աշխարհում: Այսօր բոլորը սպասողական դրության մեջ են, սպասում են՝ ինչպես կավարտվեն ընտրությունները ԱՄՆ-ում, ինչպես կավարտվի ռուսական ագրեսիան Ուկրաինայի դեմ. բոլորը սրանց հանգուցալուծմանն են սպասում: Այն, որ աշխարհում հիմա դադարել է գործել պայմանավորվածությունները պահելու որոշումը, դա միանշանակ է, եւ պետք է վերականգնել համաշխարհային կարգը՝ այն, ինչ-որ ձեւավորվել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵՎ ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ Գառնիկ Դանիելյանն ինձ ասում է՝ Նիկոլի օրակարգով եմ եկել, ինքը չպետք է մոռանա, որ հենց այսօրվա պառլամենտական ընդդիմության ու Դաշնակցության շնորհիվ է, որ Նիկոլ Փաշինյանը հանձնեց Արցախը ու մարսեց դա, հետո հայաթափեց ու մարսեց, հնարավոր բոլոր զիջումներն արեց ու անում է, եւ էլի մարսում է:

Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց քաղաքական գործիչ Սուրեն Պետրոսյանը՝ արձագանքելով «Տավուշը հանուն հայրենիքի» անդամ, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանի՝ երեկ հնչեցրած հայտարարությանը, որ Սուրեն Պետրոսյանը եկել է Նիկոլի Փաշինյանի օրակարգով.

«Ասեմ ավելին՝ քանի իրենք կան, եթե Սյունիքն էլ հանձնի, էլի մարսելու է: Հետեւաբար՝ իրենք Նիկոլ Փաշինյանի երազանքի ընդդիմությունն են, ովքեր նվազագույն պատկերացումներ ունեն քաղաքական գործընթացներից ու քաղաքակրթությունից, գիտեն, որ Նիկոլ Փաշինյանի՝ համար մեկ հենարանը պառլամենտական ընդդիմությունն է:

Երբ ինչ-որ մեկին մեղադրում են Նիկոլ Փաշինյանի օրակարգը սպասարկելու մեջ, չպետք է մոռանան, թե ովքեր էին քվեարկում, որ Նիկոլ Փաշինյանը գա իշխանության ու ովքեր էին մրցավազքի մեջ, թե ով ավելի շուտ միացավ Փաշինյանին: Հետեւաբար, եթե կա մեկը, որը Նիկոլ Փաշինյանի օրակարգն է սպասարկում՝ կամա, թե ակամա, դա միայն իրենք են:

Ես հենց սրա մասին էի խոսում, որ պետք է այս ձեւաչափից դուրս գանք, այս կործանարար օրակարգից, որպեսզի Նիկոլ Փաշինյանը չկարողանա վերարտադրվել, բայց քանի իրենք կան, բոլորն էլ դա գիտեն, ժողովուրդը միշտ էլ Նիկոլ Փաշինյանի ու իրենց միջեւ Փաշինյանին են ընտրելու:

Կամ, որ ասում են՝ Ոսկեպարում իրենք են խնդրել, որ ինձ այնտեղ դիմավորեն, ես մի բան հիշեցնեմ, երբ ապրիլի 13-ին պետք է լիներ հանրահավաք Ոսկեպարում, այնտեղի բնակիչներն ասում էին՝ Բագրատ Սրբազանի հետ խնդիր չկա, բայց մենք դուրս ենք գալու ու 200 հոգով փակենք ճանապարհը, եթե իմանանք, որ սա դառնալու է Դաշնակցական հավաք: Այն մարդիկ, ովքեր քիչ թե շատ ազդեցություն ունեին մյուս մարդկանց կարծիքների վրա, ես նրանց հետ խոսել, բացատրել եմ, որ երաշխավորում եմ՝ կարող են բոլորն էլ գալ, բայց հարթակում նախկինների ներկայացուցիչներ չեն լինելու:

Այնպես որ, երբ նման հայտարարություններ են անում, թող մի քանի անգամ մտածեն», - ասաց Սուրեն Պետրոսյանը:

ԼՈՒՐԵՐ

ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԿԱՄԵՑՆԵԼՈՒ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԱՀ Ազգային ժողովի նախագահի պարտականությունները կատարող Գագիկ Բաղունցը, ԱՀ Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը եւ ԱՀ ժողովրդի իրավունքների պաշտպանության հանձնախմբի անդամ Կարեն Բեքարյանը համատեղ հայտարարություն են տարածել. «Ողջունում ենք ԱՄՆ կոնգրեսականներ Աննա Էշուի եւ Քրիս Սմիթի կողմից ԱՄՆ Ներկայացուցիչների պալատ ներկայացված բանաձեւը, որով առաջարկվում է պաշտոնապես ճանաչել Ադրբեջանի կողմից Արցախում իրականացված էթնիկ զտումները, պատասխանատվություն պահանջել Ադրբեջանից ռազմական հանցագործությունների համար եւ պաշտպանել արցախցիների՝ անվտանգ եւ ապահով վերադարձի իրավունքը:

Կարեւորում ենք, որ ԱՄՆ կոնգրեսականների կողմից ներկայացված այս բանաձեւը դատապարտում է Ադրբեջանի կողմից Արցախի ապօրինի շրջափակումն ու 2023 թվականի սեպտեմբերին սանձազերծած ռազմական ագրեսիան եւ ԱՄՆ նախագահին ու դաշնային համապատասխան մարմիններին կոչ է անում անհապաղ գործողություններ ձեռնարկել՝

- ապահովելու Արցախի բռնի տեղահանված ժողովրդի սեփական հայրենիք ազատ եւ անվտանգ վերադառնալու հիմնարար իրավունքը՝ անվտանգային ամուր երաշխիքների ներքո,
- պատժամիջոցներ կիրառել ռազմական հանցագործությունների համար մեղավոր ադրբեջանական պաշտոնյաների նկատմամբ,
- հումանիտար աջակցություն ցուցաբերել Հայաստանին՝ բռնի տեղահանված արցախցիների հումանիտար խնդիրները հասցեագրելու համար,
- կասեցնել ԱՄՆ կողմից Ադրբեջանին տրվող ռազմական աջակցությունը
- քայլեր ձեռնարկել Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների, այդ թվում՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության անհապաղ ազատ արձակման եւ Արցախում հայկական մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ:

Լիահույս ենք, որ կոնգրեսականների կողմից ներկայացված բանաձեւը պաշտոնապես կընդունվի Ներկայացուցիչների պալատի կողմից, եւ դրանում ներկայացված դրույթները կարտահայտվեն ԱՄՆ գործադիրի կողմից վարվող քաղաքականության մեջ՝ նպաստելով Հարավային Կովկասում արդարացի եւ տեւական խաղաղության հաստատմանը»:

ՀՀ-Ն ՀԱՆՐԱՔՎԵ ՉԻ ԱՆՑԿԱՑՆԻ

«Ես ԵՄ ամբիոնից հայտարարել եմ, որ ՀՀ-ն պատրաստ է ԵՄ-ին մոտ լինել այնքան, ինչքան ԵՄ-ն դա հնարավոր կհամարի«, - այս մասին «Ժողովրդավարության հայկական ֆորում»-ի ժամանակ հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Եթե ես մտածեի, որ Հայաստանի ժողովուրդը այդ գաղափարին չի աջակցում, նման հայտարարություն չէի անի: Հիմա խնդիրն ինչի՞ մեջ է՝ անել հանրաքվե, որ պարզել ժողովրդի կարծի՞քը: Կներեք, ես որպես պաշտոնյա, որն իրավասու է ներկայացնել ՀՀ ժողովուրդը, գիտեմ ՀՀ ժողովրդի կարծիքը», - ասաց նա:

Փաշինյանը նշեց, որ եթե հանրաքվե անեն, պետք է քարոզարշավ անեն: «Այդ դեպքում մարդիկ մեզ տալու են հարցեր՝ ինչպես, երբ, ինչ քայլերով, ԵՄ-ն ուզո՞ւմ է, թե ոչ: Մարդիկ հարցնելու են՝ ԵՄ-ն պատրա՞ստ է մեզ ընդունելու: Ես այդ հարցի պատասխանը չեմ կարող տալ, որովհետեւ ԵՄ-ի ներսում էլ ընթանում են գործընթացներ, ընտրություններ են տեղի ունենում, որոնց արդյունքներն առնվազն հարցեր են առաջացնում: Մենք ամենաբարձր մակարդակով հայտարարել ենք քաղաքական կամքի մասին»,- ասաց նա:

ՈՒՄ ՀԵՏ ԿԱՄՐԱՊՆԴԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱՏՕ-Ն

Հյուսիսատլանտյան դաշինքը կշարունակի ամրապնդել համագործակցությունն Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների, ներառյալ՝ Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Կորեայի Հանրապետության եւ Ճապոնիայի հետ:

Այդ մասին Yomiuri թերթին տված հարցազրույցում հայտարարել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը:

Ըստ Ստոլտենբերգի՝ խոսքը վերաբերում է փոխգործակցության ուժեղացմանն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են սպառազինությունների վերահսկումը, տեխնոլոգիաների զարգացումը եւ հակազդեցությունը կիբեռհարձակումներին:

ԿԻԵՎԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուսաստանը բաց է Ուկրաինայի վերաբերյալ ցանկացած երկխոսության համար, այդ թվում եւ միջնորդների մասնակցությամբ, բայց իր նպատակներին հասնելու պայմանով: Այս մասին, ինչպես տեղեկացնում է ՏԱՍՍ-ը, լրագրողներին հայտնել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

Կրեմլի ներկայացուցիչն այսպես է պատասխանել այն հարցին, թե պատրաստ է արդյոք Մոսկվան Կիեւի հետ բանակցությունների միջնորդների միջոցով, ինչպես առաջարկել է Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին:

«Նախագահ Պուտինը բազմիցս ասել է, որ ՌԴ-ն բաց է ցանկացած շփման, ցանկացած երկխոսության համար՝ հասնելու այն նպատակներին, որոնք մենք մեր առջեւ դրել ենք: Նախագահը պահում է այս բացությունը, նա այդ մասին բազմիցս ասել է», - նշել է Պեսկովը:

Ավելի վաղ Philadelphia Inquirer պարբերականի հարցազրույցում Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին նշել էր, որ ՌԴ նախագահի հետ բանակցությունների միակ տարբերակը միջնորդների օգտագործումն է, այնպես, ինչպես արվել է հացահատիկի սեւծովյան միջանցքի քննարկման եւ ստեղծման ժամանակ:

ՀՈՒՆԳԱՐԻԱՆ՝ ԵՄ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հունգարիան սկսում է իր վեցամսյա նախագահությունը ԵՄ խորհրդում՝ մի շարք հարցերի շուրջ ԵՄ ղեկավարության հետ լուրջ տարաձայնությունների ֆոնին, այդ թվում՝ Ուկրաինայի հակամարտությունը եւ միգրացիան: Հուլիսի 1-ին Հունգարիան ԵՄ-ում էստաֆետը վերցնում է Բելգիայից, որպեսզի դեկտեմբերի վերջին ռոտացիոն սկզբունքով այն փոխանցի Լեհաստանին:

Բուդապեշտի եւ Բրյուսելի միջեւ բարդ հարաբերությունները նույնիսկ արտացոլվել են նախագահության կարգախոսի ընտրության մեջ.

«Եկեք դարձնենք Եվրոպան կրկին մեծ»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀՈՒՆԻՍԻ 12-ԻՆ

ՊԵՏՔ Է ՓՈԽՎԻ ՆԱԵՎ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Աշոտ Մինասյանը եւ կարմիրբերետավորները, նույնիսկ եթե եղել են մի գազելում, որպես փակ համակարգ, այնուհանդերձ՝ այլ մոլորակում չեն եղել: Եվ սա մեկ հոգու պատմություն չէ, այլ շատ շատերինը:

Այս մասին իր հոդվածում գրել է «Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ, Վահե Հովհաննիսյանը:

«Աշոտ Մինասյանի (Աշոտ Երկաթի) պատմությունը սահմռկեցուցիչ է: Նկարագրածը (ապրածը) «սովորական միտինգային» դրվագ չէ, դա այսօրվա «նոր Հայաստանի» կենսափիլիսոփայությունն է:

Աշոտ Մինասյանը եւ կարմիրբերետավորները, նույնիսկ եթե եղել են մի գազելում, որպես փակ համակարգ, այնուհանդերձ՝ այլ մոլորակում չեն եղել: Եվ սա մեկ հոգու պատմություն չէ, այլ շատ շատերինը:

Այս դրվագի եւ հունիսի 12-ի բոլոր ապօրինությունների բացարձակ պատասխանատուն եւ մեղավորը իշխանություններն են, բայց պիտի հասկանանք նաեւ, թե ինչ մեխանիզմների «շնորհիվ» է իշխանությունը ռիսկ անում նման այլանդակ գործողությունների.

1. Կարմիր բերետավորներին այդպիսին լինելու եւ պետության հանդեպ բացառիկ վստահություն ունեցող մարդու վրա (կամ ցանկացած մարդու) հարձակվելու իրավունք տվել են.

a. 680 հազար ՀՀ քաղաքացիները, ովքեր, պատմական աղետից հետո վերընտրելով այս իշխանությանը, այսօր չեն շտապում շտկել իրենց քվեն այսքան ավերից հետո:

b. Ոստիկանության ղեկավար կազմը, որից որեւէ մեկը հրաժարական չտվեց՝ այս եւ այլ ահավոր պատմություններից հետո: Չի գտնվում մեկը, որի համար անտանելի կլինի նման միջավայրում աշխատելը:

c. «Բարեփոխիչները», միջազգային կառույցները, Արեւմտյան դեսպանատները, որոնք ձայն չեն հանում որեւէ վայրագության դեպքում:

d. Իբր կրթված, իբր մտավորական, իբր հումանիստ մասնագիտական էլիտաները, որոնք «քաղաքականությամբ չեն զբաղվում» ու երկրում կատարվողի մասին կարծիք չունեն:

2. Անհավանական է թվում, որ անձամբ իրեն պսակադրած Սրբազանին բերետավորը կարող է հայհոյել, բայց նա դա անում է, որովհետեւ այս երկիրն արդեն 6 տարի է՝ անվերջ հայհոյանք է լսում ու չունի որեւէ «ՉԻ կարելի»: Որտե՞ղ են ձեւավորվել այս մարդիկ, ո՞ր միջավայրում, ո՞ր դպրոցում, ո՞ր հասարակությունում: Ինչքա՞ն կարեւոր բաներ ենք տապալել պետականության 30 տարում:

3. Այս ամենը հնարավոր դարձավ, որովհետեւ մեր պետության քաղաքացիները զանգվածաբար օտարացան մեր պետությունից: Ինչպե՞ս է հնարավոր, որ այն ժողովուրդը, որի համար Աշոտն ամեն կռվի պատրաստ է եղել իր կյանքը տալու, մասսայաբար ապրի գրին քարտի կամ օտարահպատակության երազանքով. բա ո՞ւմ համար էր պետությունը, բա էլ ի՞նչ հայրենիք:

4. Ո՞նց բաց թողեցինք շուրջ երկու տասնամյակ «Արեւմտյան մեդրեսեներում» նոր հայի ձեւավորումը՝ իբր բարեփոխիչ, իբր լիբերալ, իբր իրավապաշտպան, բայց իրականում՝ հակահայաստանյան ենիչերիների կրթման ու վերապատրաստման պրոցեսը: Աչքներիս առաջ էին ախր նրանք ուժեղանում, կազմավորվում, մեդիաներ ստանում-ստեղծում, քարոզում, ԱԺ մտնում, որ մի օր էլ նրանց հավաքական ձայնը ասի՝ «Ղարաբաղը մեզ հետ ի՞նչ կապ ունի»:

5. Աշոտ Մինասյանը խաղաղ ժամանակ զբաղեցրել է պաշտոն, որը շատ ուրիշները կօգտագործեին կարողություն դիզելու համար: Նա միշտ ապրել է զուսպ ու համեստ՝ չգողանալով իր երկրից: Աշոտի պես մարտիկներն իրենց մեջ տարիներով պահել են հարցը՝ ինչո՞ւ հաղթած, հերոս, պետություն կառուցած մարդիկ թույլ տվեցին այլանդակ բարքեր, փողի մոլուցք: Անգամ կարգին, հայրենիքի առաջ վաստակ ունեցող մարդիկ ինչպե՞ս դարձան փողի ու ահռելի հարստության տեր՝ մեր փոքր, աղքատ, Արցախի խնդիր ունեցող երկրում: Մայրցամաքից մայրցամաք ահռելի- անծայրածիր հարստության ու գույքերի տեր: Ո՞նց, ինչպե՞ս, ո՞ր իրավունքով: Ի վերջո, նրանք գերի դարձան այդ հարստությանը, սակայն դրա գերին դարձանք նաեւ մենք բոլորս, Հայաստանը, Արցախը:

6. Եթե մենք այս հարցերին չպատասխանենք, չենք հասկանա, թե ինչպես ձեւավորվեց այսօրվա անասնական մթնոլորտը, եւ թե ինչպես փողոցից եկավ գաղափարապես հստակ վարժեցված մի ուժ, որը թքած ունի Արցախի վրա էլ, Հայաստանի վրա էլ:

7. Փառահեղ հաղթանակով ձեւավորված պետությունը ո՞նց կարող էր այսքան անարդար բարքերով զարգանալ: Ո՞նց: Վերջում պարզվելու է, որ միակ «ապօրինի գույքը» մեր հայրենիքն էր:

8. Աշոտի պատմությունից հասարակությունը պիտի պոռթկար: Հակառակը նորմալ չէ: Բայց նույն հասարակությունը պատերազմից շաբաթներ անց աղմկոտ քեֆեր էր անում, Արցախի կորստին հանգիստ նայեց, ինչո՞ւ պիտի Աշոտի հետ կատարվածից սարսռա, երբ շատերը Ռուբեն Վարդանյանի, Բակո Սահակյանի եւ մեր մյուս հայրենակիցների գերեվարվելուց ուրախացել էին:

Կարմիրբերետավորը եւ նրան հրաման տվող իշխանությունները պետք է փոխվեն, բայց պիտի փոխվի նաեւ նրանց ձեւավորող միջավայրը: Մենք պիտի կարմիր գծեր եւ ճիշտ ուղենիշեր ունենանք, որ դադարեցնենք ինքնաոչնչացումը»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՐԾՐԱՏԻՊԱՅԻՆ ԵՆ»

Հատկապես փոքր հասարակություններում, ինչպիսին Հայաստանն է, որոշ խնդիրներ կարծրատիպային են, եւ դրանց մասին շատ դժվար է խոսել: Այս մասին երեկ՝ հուլիսի 1-ին, «Ժողովրդավարության հայկական ֆորումի» ժամանակ հայտարարեց Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության Եվրոպայի եւ Եվրասիայի ծրագրերի տնօրեն Մարկ Բեհրենդտին:

«Հետեւաբար, մեզ նման կազմակերպությունները այդ դեպքում քաղաքական առաջնորդություն են վերցնում տվյալ թեմաների վերաբերյալ քննարկումները բացելու համար: Մենք այսօր նաեւ զեկույցով ենք հանդես գալու, որը վերաբերում է Լեռնային Ղարաբաղը լքած հայերի ճակատագրերին: Կարծում եմ՝ այս զեկույցի պատրաստումը եւս պահանջում էր, որ ինչ-որ մեկը դրսից ներգրավված լինի: Մենք, կարծես ինչ-որ առումով առաջնորդություն վերցնելով, քաղաքական պաշտպանություն ենք ապահովել այս զեկույցի համար», - ասաց նա:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հունիսի 28-ին կարգադրություն է ստորագրել, որով պարգեւատրել է Պետական պահպանության ծառայության աշխատակիցներին:

Կարգադրության մեջ նշվում է.

«Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության կազմավորման տոնի առթիվ ծառայողական պարտականությունները գերազանց եւ բարձր պատասխանատվությամբ կատարելու համար Պետական պահպանության ծառայության աշխատակիցներին պարգեւատրել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշանվերով՝ համաձայն 1-ին հավելվածի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի շնորհակալագրով՝ համաձայն 2-րդ հավելվածի»:

ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՐԱՏԱՊ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

Մարդու իրավունքների պաշտպանին պարբերաբար հասցեագրվում են դիմում-բողոքներ այն մասին, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» եւ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ները իրենց կողմից մատուցվող ծառայություններ-ը պատշաճ չեն իրականացնում:

Նշվածի վերաբերյալ ուսումնասիրություն է իրականացվել նաեւ սոցիալական ցանցերում եւ լրատվամիջոցներում:

Այսպիսով՝ 2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» եւ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ների վերաբերյալ ստացվել է ընդհանուր 79 գրավոր եւ բանավոր դիմում-բողոք 106 անձանցից:

«Վեոլիա Ջուր» ընկերության վերաբերյալ ստացվել է 49 գրավոր եւ բանավոր բողոք 74 անձից: Քաղաքացիները հիմնականում բարձրաձայնել են հարցեր կապված սահմանված ժամանակացույցին համապատասխան ջրամատակարարում չիրականացնելուն, ջրամատակարարման ընդհատումներին, ինչպես նաեւ ջրանջատումների վերաբերյալ պատշաճ չծանուցելուն, խմելու ջրի որակին, ճնշմանը եւ այլն:

Նշված խնդիրների առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել է նաեւ սոցիալական մեդիայի մշտադիտարկում, ուսումնասիրվել են քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը:

Հաշվի առնելով, որ խնդիրները զանգվածային են եւ ունեն շարունակական բնույթ՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ անթույլատրելի է համարում ստեղծված իրավիճակը: Հատկապես մտահոգիչ է, երբ ամռան ամիսներին մարդիկ զրկված են ջրի եւ սանիտացիայի հասանելիությունից:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը եւս մեկ անգամ շեշտում է՝ անհրաժեշտ է ուսումնասիրել վթարային ընդհատումների պատճառները եւ աշխատանքներ իրականացնել դրանք նվազագույնի հասցնելու ուղղությամբ, առավել հետեւողական լինել խմելու ջրի մատակարարման ծառայությունների կանոնների, ինչպես նաեւ ջրամատակարարման ընդհատումների վերաբերյալ պատշաճ ծանուցումների իրականացման նկատմամբ:

Բազմաթիվ բողոքներ ստացվել են նաեւ «ՀԷՑ» ՓԲԸ-ի վերաբերյալ: Այսպես, ստացվել է 30 գրավոր եւ բանավոր բողոք 32 անձից, որոնք հիմնականում վերաբերել են էլեկտրամատակարարող ընկերության կողմից առանց նախապես պատշաճ ծանուցելու եւ տեւական ժամանակով էլեկտրաէներգիայի ընդհատումներին, դրա հետեւանքով նյութական վնասի պատճառման դեպքերին, աշխատանքային գործունեության պատշաճ իրականացումը խաթարելուն, ֆինանսական վնասների կրմանը:

Այս ամենի հետեւանքով էական վնաս է հասցվում ինչպես անհատ քաղաքացիների, այնպես էլ տարբեր կազմակերպությունների:

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանին հատուկ հաստատություններ մոնիթորինգային այցերի ընթացքում հասցեագրվել են բազմաթիվ բողոքներ, որ էլեկտրաէներգիայի պարբերական խափանումների ընթացքում անհնար է լինում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի իրավունքը: Օրինակ, կան հաստատություններ, որոնք կահավորված են վերալակով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժը ապահովելու նպատակով՝ մինչդեռ պարբերական եւ առանց պատշաճ ծանուցման էլեկտրաէներգիայի անջատումների հետեւանքով հաճախ խնդիր է առաջանում նրանց մի հարկից մյուսը տեղափոխելու եւ այլ վերաբերելի հարցերի հետ կապված:

Հարկ ենք համարում ընդգծել, որ նշված երկու դեպքերին Մարդու իրավունքների պաշտպանն առավել մանրամասն անդրադարձել է 2023 թվականի տարեկան հաղորդման մեջ: Տեղեկացնենք նաեւ, որ Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրված խնդիրների վերաբերյալ գրություններ է հասցեագրել «ՀԷՑ» եւ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ներին:

Նշված խնդիրներն ունեն հրատապ լուծման անհրաժեշտություն եւ Մարդու իրավունքների պաշտպանը հետեւողական է լինելու դրանց լուծման հարցում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ

«Օրենքով գող» Օշականցի Գեւորիկի որդին՝ Սարգիս Մելիքյանը, հրաժարվում է փորձաքննության ենթարկվել: Իրավապահ մարմինները գրեթե բոլոր իրավական գործընթացներով փորձում են հասնել այն հարցին, որ օրենքով գողի տղան կեղծիքների արդյունքում է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից: Ավելին՝ ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ «օրենքով գող» Օշականցի Գեւորիկի որդին այս պահին ազատության մեջ է, սակայն նրա՝ բանակից ազատման հիմքերը ստուգելու հարցում լուրջ գործընթաց է մեկնարկել:

2024 թվականի հունվարի 31-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության Արագածոտնի մարզային վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, թե որտեղ է գտնվում Օշական գյուղի բնակիչ 21-ամյա Սարգիս Մելիքյանը:

Shamshyan.com-ը հայտնել էր, որ ԱԱԾ Արագածոտնի մարզային վարչության ծառայողները եւ նրանց միացած մյուս իրավապահները Օշականում հայտնաբերել են Ս. Մելիքյանին եւ բերման ենթարկել ոստիկանության Աշտարակի բաժին:

Սկզբնաղբյուրի տեղեկություններով՝ վերջինիս նկատմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2023 թվականի հունիսին որոշում է կայացրել որպես խափանման միջոց կալանավորումը: Նրա նկատմամբ քրեական վարույթ է նախաձեռնվել ՀՀ նախկին քր. օենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով (զինվորական ծառայությունից խուսափել):

Ավելի վաղ ArmLur.am-ը հայտնել էր, որ «օրենքով գող» Օշականցի Գեւորիկի որդին ՆԳՆ ոստիկանության Աշտարակի բաժնից տեղափոխվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ:

Այս իրավիճակում հարց է առաջանում, եթե նա օրինական ճանապարհով է բանակից ազատվել, ապա ինչու է հրաժարվում ենթարկվել փորձաքննության, ինչը խիստ կասկածների տեղիք է տալիս:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԿԱՄԱՆ ՓՈՐՁԸ ԿԱՆԽՎԵԼ Է

ՊԵԿ պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման եւ հսկողության վարչությունը շարունակում է անզիջում պայքարը ՀՀ պետական սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքերի բացահայտման ուղղությամբ:

Օրերս «Բագրատաշեն» անցման կետ է ժամանել ՌԴ քաղաքացի Ա.Մ.-ի վարած թեթեւ մարդատար տրանսպորտային միջոցը: Մուտքի շվաքարանի տակ՝ մաքսային հսկողության գոտում, մաքսային ծառայողի հարցին՝ արդյոք մեքենայում առկա են հայտարարագրման ենթակա ապրանքներ, վարորդը պատասխանել է՝ առկա չեն: Մաքսային ծառայողների մոտ սակայն կասկածներ են առաջացել, եւ տրանսպորտային միջոցն ուղեկցվել է խոր զննման անգար: Ավտոմեքենան ենթարկվել է մաքսային տեսազննման եւ զննման, ինչի արդյունքում մեքենայի հետեւի նստատեղից դեպի բեռնախցիկ ընկած հատվածի արանքում՝ հատուկ պատրաստված թաքստոցից հայտնաբերվել է «REDMI», եւ «SAMSUNG GALAXY» մոդելների 109 բջջային հեռախոս:

Մաքսային ծառայողների կողմից դեպքի կապակցությամբ հարուցվել է համապատասխան վարչական վարույթ: Մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ հանդիսացող բեռն ի պահ է վերցվել:

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է համակարգչային հափշտակություն կատարելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ՔԿ-ից:

«Քննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ 2021 թվականի հոկտեմբերից մինչեւ 2023 թվականի օգոստոս ընկած ժամանակահատվածում, համակարգչային հափշտակություն կատարելու դիտավորությամբ, շարունակաբար, առանց իրավաչափ հիմքով նախատեսված թույլտվության տվյալներ մուտքագրելու միջոցով, Երեւան քաղաքի 37-ամյա բնակչուհին ապօրինի հասանելիություն է ստացել adjarabet.am եւ totogaming.am բուքմեյքերական կայքերում գրանցված մի քանի անձանց խաղային հաշիվներին եւ դրանց կցված բանկային քարտերի հաշիվներից ելքային փոխանցումներ կատարել իր խաղային հաշիվներին՝ այդ կերպ ստանալով դրանք տնօրինելու, օգտագործելու հնարավորություն:

Այնուհետեւ, խաղադրույքներ կատարելու նպատակով, նա անձանց խաղային հաշիվներից գումարներ է ելքագրել՝ այդ կերպ քաղաքացիներին պատճառելով գույքային վնաս:

Նախաքննության տվյալներով՝ վերոհիշյալ եղանակով քաղաքացիներից հափշտակված գումարի չափն ընդհանուր առմամբ կազմում է 1.665.400 ՀՀ դրամ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա 37-ամյա կնոջը մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 28-ից հուլիսի 1-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 183 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱՎԵԼՅԱԼ 5 ՄԻԼԻՈՆԸ ԿԱՃԱ՞ՌՔ Է

Սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական ծրագրով՝ պետությունը 10 տարվա ընթացքում ամբողջությամբ կմարի մինչեւ 16 միլիոն դրամի կառուցապատման հիփոթեքային վարկի մայր գումարն ու տոկոսագումարը: Օրերս Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ 5 միլիոն դրամով ավելացվում է 16 միլիոն դրամի գումարը: Սակայն հետո պարզվեց, որ այդ որոշումը վերաբերում է միայն Կիրանց, Բերքաբեր, Ոսկեպար, Բաղանիս գյուղերի բնակիչներին: Տավուշի մարզի սահմանամերձ այլ գյուղերի բնակիչների տարակուսած են այդ որոշումից, շատերը կարծում են, որ Նիկոլ Փաշինյանի որոշումը յուրատեսակ կաշառք է նշված 4 գյուղերի բնակիչներին, որպեսզի նրանք համակերպվեն սահմանազատման անվան տակ Ադրբեջանին միակողմանի կերպով տարածքների հանձնման հետ:

ՄԱՐԶՊԵՏՆ ԱՆՏԵՂՅԱ՞Կ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք. «Շուրջ 3 ամիս է, ինչ սահմանամերձ Դովեղ գյուղի դպրոցի շենքի շինարարությունը դադարեցված է, ի՞նչն է դրա պատճառը: Ե՞րբ է շենքի շինարարությունը վերսկսվելու, ե՞րբ է այն շահագործման հանձնվելու»: Մարզետարանից պատասխանել են. «Դովեղի միջնակարգ դպրոցի շենքի շինարարության պատվիրատուն հանդիսանում է քաղաքաշինության կոմիտեն, առաջարկում ենք դիմել քաղաքաշինության կոմիտեին»: Մարզպետ Հ. Ղալումյանը մարզպետարանում հաճախ խորհրդակցություններ է անցկացնում, որտեղ իր ենթակաների հետ քննարկում է պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի ընթացքը: Մարզի հանրակրթական դպրոցները, այդ թվում՝ Դովեղի դպրոցը, գործում են մարզպետարանի ենթակայության ներքո, մարզպետը պետք է տեղյակ լիներ, թե ինչու է դադարեցվել Դովեղի դպրոցի շինարարությունը, երբ այն կվերսկսվի: Դովեղի դպրոցի շենքի շինարարությունը պետք է ավարտվեր 2024թ. հունիսի կեսին, սակայն շինաշխատանքների միայն 20-25 տոկոսն է արված:

ՎԱՆՔԵՐԻՆ ՏԵՐ ԿԱՆԳՆԵ՛Ք

ՀՀ գլխավոր դատախազությունը պահանջում է անվավեր ճանաչել Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Եղիպատրուշ գյուղում գտնվող 13-րդ դարի առաջին քառորդին կառուցված Ս. Աստվածածին եկեղեցու նվիրատվությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Տավուշի մարզի անտառներում գտնվող հոգեւոր, պատմական եւ մշակութային մեծ արժեք ներկայացնող վանքերը քանդվում են: Կիրանց եւ Աճարկուտ գյուղերի մոտակա անտառում գտնվող 13-րդ դարի Կիրանց, 13-րդ դարի Առաքելոց,12-13-րդ դարերի Դեղձնուտ, նույն դարերի Սամսոնի վանքերը, Դիլիջանի անտառում գտնվող Մաթոսավանքը եւ բազում այլ վանքեր վատ վիճակում են: Դրանք բոլորը գտնվում են պետության հաշվեկշռում , սակայն Հայաստանի անկախացումից հետո չեն վերանորոգվել, քանդվում են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՊԱՀՈՎԻ

Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհուրդը հաստատել է 110 միլիոն ԱՄՆ դոլար (102 միլիոն եվրոյին համարժեք) վարկ՝ ի աջակցություն Հայաստանի «Համադարփակ առողջապահական ծածկույթի ապահովում» ծրագրին: Այս գործառնությունը նպատակ ունի բարելավել առողջության առաջնային պահպանման օղակի որակը, ապահովել հասանելի առողջապահական ծառայություններ ողջ երկրում եւ բարելավել պետական ծախսերի արդյունավետությունը առողջապահության ոլորտում: Ծրագիրն աջակցում է Հայաստանի կառավարության հնգամյա գործունեության միջոցառումների ծրագրի (2021-2026 թթ.) իրականացմանը եւ «Առողջապահության համակարգի զարգացման ռազմավարության» մաս է հանդիսանում:

Թեեւ Հայաստանի առողջապահական ցուցանիշները վերջին տասնամյակների ընթացքում բարելավվել են մոր եւ մանկան առողջության ուղղությամբ, այնուամենայնիվ ոչ վարակիչ հիվանդությունները դեռեւս մահացությունների եւ հիվանդությունների ամենամեծ բաժինն են կազմում: Առողջապահության ոլորտում պետական ծախսերի ցածր մակարդակը եւ առողջապահական համակարգի ցածր արդյունավետությունը նպաստում են մեծ ծախսերի, ինչը հանգեցնում է բնակչության շրջանում սեփական միջոցներից մեծ վճարումների («գրպանից վճարումների»):

Հայաստանի առողջապահության ոլորտում ընթացիկ ծախսերի՝ նմանատիպ վճարումների մասնաբաժինը աշխարհում ամենաբարձրներից է (2021թ. կազմել է 81,4 տոկոս):

«Հայաստանում մասնավոր առողջապահական բարձր ծախսերն եզակի են աշխարհում եւ բացասաբար են անդրադառնում քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի վրա: Ընթացիկ բարեփոխումները նպատակ ունեն ստեղծել ավելի լավ ֆինանսական եւ կարգավորող խթաններ որակյալ առողջապահական ծառայությունների տրամադրման համար: Ընդգրկուն բարեփոխումները կարող են հիմնովին փոխել Հայաստանի բնակչության շրջանում հիվանդությունների օրինաչափությունները, եւ առողջապահությունն ավելի մատչելի դարձնել բնակչության համար», - նշել է Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար Կարոլին Գեգինատը:

Հաստատված գործառնությունը կօգտագործի «արդյունքահենք ծրագիր» ֆինանսավորման գործիքը, որն ուղղակիորեն կապում է միջոցների բաշխումը ծրագրի կոնկրետ արդյունքների գրանցման հետ: Այն կաջակցի երկրի առողջապահական ոլորտի հավակնոտ բարեփոխումներին, ներառյալ պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրմանը: Ի լրումն առողջապահական ծառայությունների որակի բարելավման միջոցառումների, բարեփոխումների նպատակն է բարձրացնել առողջապահության ոլորտի պետական ծախսերի արդյունավետությունը, օրինակ՝ պետության կողմից ֆինանսավորվող հիմնական դեղերի գնագոյացման այնպիսի մեխանիզմի կիրառում, որը հիմնված կլինի միջազգային գների համեմատությունների վրա:

Ծրագրի շահառուների շրջանակը Հայաստանի ողջ բնակչությունն է, ով կստանա ավելի որակյալ եւ մատչելի բժշկական ծառայություններ ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար: Ակնկալվող արդյունքներից են առաջնային բուժօգնության հաստատությունների ֆինանսավորման այնպիսի համակարգի ներդրում, որի հիմքում են որակի եւ ծածկույթի ցուցանիշները, բուժքույրերի եւ ընտանեկան բժիշկների բարելավված ուսուցում, նշանակված դեղերի ցածր գների ապահովում եւ ընթացիկ առողջապահական ծախսերում «գրպանից վճարումների» մասնաբաժնի կրճատում:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ի՞ՆՉ ԱՐԺԵ ՀԱՆԳԻՍՏԸ ԱՂՎԵՐԱՆՈՒՄ

Ամառային հանգստի սեզոնը համարվում է բացված, ինչը նշանակում է, որ մարդիկ այցելում են տարբեր հանգստի գոտիներ՝ իրենց ամառային հանգիստը վայելելու:

Շատ մարդիկ նախընտրում են իրենց հանգիստը անցկացնել Հայաստանում: Ամեն տարի ակտուալ են եղել Աղվերանի հանգստի գոտիները:

«Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվել է, թե ինչ արժեն հյուրանոցները այնտեղ:

Այսպիսով՝ «Պարկ Ռեզորթ Աղվերան» հյուրանոցում ստանդարտ մեկտեղանի սենյակների արժեքը 22.000 դրամ է: Արժեքը իր մեջ ներառում է նախաճաշ եւ ընթրիք:

Ստանդարտ, երկտեղանի մահճակալով սենյակի արժեքը՝ 32.000 դրամ, իսկ դելյուքս երկտեղանին՝ 35.000 դրամ:

Երկու ննջարանով սուիթ 4 անձի համար նախատեսվածը 38.000 դրամ է:

«Մգե Կավալիեր» հանգստյան տան սենյակների արժեքը այդքան էլ չի տարբերվում նախորդից:

Ընտանեկան՝ 3 անձի համար 25.000 դրամ:

4 անձի համար՝ կրկին 25.000 դրամ:

Ընտանեկան՝ 6 անձի համար 35.000 դրամ:

«Արթուրս Աղվերան Ռեզորթ» հյուրանոցում մինչեւ 2 գիշեր մնալու դեպքում ստանդարտ մեկտեղանոց սենյակի արժեքը 27.000 դրամ է: 2 անձի համար՝ 34.000 դրամ:

Արժեքը իր մերջ ներառում է նախաճաշ եւ ընթրիք:

«Արթուրս Աղվերան Ռեզորթը» առաջարկում է նաեւ փաթեթներ՝ 4 օր / 3 գիշեր «Արթուրս Աղվերան Ռեզորթ» հյուրանոցում 1 անձի համար (հունիս-օգոստոս)

Արժեքը՝ 84.000դր.

Սնունդը՝ 1 անգամ (նախաճաշ)

Հյուրանոցի 1 օրվա արժեքը 1 անձի համար ստանդարտ twin կամ double համարում՝ 28.000դր.

«Կրիստալ Ռեզորթ Աղվերան» հյուրանոցում 1 հոգու համար նախատեսված սենյակները արժեն 26.000 դրամ: 2 անձի համար՝ 38.000 դրամ: 6 հոգու համար նախատեսված Լյուքս սենյակները 108.000 դրամ են:

Հյուրանոցում կա անվճար լողավազան, սեղանի թենիս, մարզասրահ, մանկական սենյակ, համակարգչային սրահ, WI-Fi ինտերնետ, ավտոկայանատեղի:

«Ալպիական Մանուշակ» հանգստյան տան մեկ, երկու, երեք անձի համար նախատեսված սենյակները արժեն 13.000 դրամ:

Կա անվճար բացօթյա լողավազան, բիլիարդ, թենիս, խաղահրապարակ, համակարգչային խաղեր, ավտոկայանատեղի:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 53 պատահար. 4 մարդ զոհվել է, 78-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 18.07.2024 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.-ին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

- Լոտ՝ ՀՀ, Տավուշի մարզ, համայնք Աչաջուր, 1-ին փողոց, 38/3 հասցեում գտնվող 0,11406 հա հողամաս,
- Լոտի մեկնարկային գինը՝ 3900000 (երեք միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ,
- Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),
- Լոտը գրավադրված է:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,
- իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com
հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31
հեռ.՝ +374 11 56 45 13
կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ հաճախորդներ,

տեղեկացնում ենք, որ 2024թ. հուլիսի 1-ից «Յունիբանկի» «Մխչյան» մասնաճյուղը /հասցեն՝ Արարատի մարզ, Մխչյան-Հովտաշեն 1/ կդադարեցնի իր գործունեությունը: «Մխչյան» մասնաճյուղի ակտիվներն ու պարտավորությունները կփոխանցվեն բանկի «Արտաշատ» մասնաճյուղին /հասցեն՝ Արտաշատ, Օգոստոսի 23, թիվ 19Գ/:

Տեղեկատու կենտրոն՝ +374 10 59 55 55

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԿՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵՆ ՈԼՈՐՏԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Հուլիսի 1-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել է Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտի գյուղատնտեսության պալատի մասնագետներին, որոնք իր հրավերով, Գեղարքունիք-Իզեր համագործակցության շրջանակում, գտնվում են Գեղարքունիքի մարզում: Այդ մասին տեղեկանում ենք մարզպետի Ֆեյսբուքի էջից:

«Հանդիպման հիմնական նպատակն էր ֆրանսիական կողմին ներկայացնել Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության առանձնահատկությունները, զարգացման հեռանկարները եւ հիմնախնդիրները՝ Գեղարքունիք-Իզեր ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում ֆրանսիական փորձը Գեղարքունիքի մարզում տեղայնացնելու միջոցով գյուղատնտեսության զարգացմանն ու արդիականացմանը զարկ տալու եւ առաջնահերթ անելիքները հստակեցնելու համար:

Խոսեցի Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության զարգացման հիմնական ուղղությունների, ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի, ներդրումային խոշոր ծրագրերի, գրանցված արդյունքների ու այն կոնկրետ քայլերի մասին, որոնք կարող են նպաստել մարզի գյուղատնտեսության առաջընթացին:

Ֆրանսիացիներն իրենց հերթին ներկայացրին Իզերի դեպարտամենտի գյուղատնտեսական ձեռքբերումները, ֆերմերային խոշոր տնտեսությունների ձեւավորման ու կառավարման փորձը եւ պատրաստակամություն հայտնեցին՝ համատեղ ուժերով ուսումնասիրելու Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության առանձնահատկությունները եւ մշակելու համագործակցության ռազմավարությունը՝ գործողության մեջ դնելով ոլորտային զարգացում ապահովող ծրագրեր հողագործության, անասնապահության, գյուղատնտեսական կրթության զարգացման ուղղություններում:

Մեր մարզում տարիներ շարունակ մարդիկ վարել են ավանդական գյուղատնտեսություն, որի արդյունքում մենք հիմնականում գործ ունենք նվազ եկամտաբերության ու բարձր ինքնարժեքի հետ: Համագործակցության մեր նպատակը պետք է լինի՝ ֆրանսիական փորձի հիման վրա զարգացնել այնպիսի մշակաբույսերի ցանքեր, որոնք կապահովեն բարձր եկամտաբերություն ու համեմատաբար ցածր ինքնարժեք:

Նույնը կարելի է կիրառել անասնաբուծության, անասնապահական մթերքների արտադրության ոլորտներում:

Կարծում եմ, որ մենք կարող ենք համագործակցության ընդհանուր եզրեր գտնել ու տեսանելի արդյունքներ գրանցել»,- նշված է գրառման մեջ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«ԲԻԷԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Չարենց փողոց, 13 շենք, 57 հասցեում գտնվող 78,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19250000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Բաղաբերդ թաղամաս, 12 շենք, 53 հասցեում գտնվող 81,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18790000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Այգեստան փողոց, 10 հասցեում գտնվող 422 ք.մ. բնակելի տուն, 14,5 ք.մ. լողավազան, 5,7 քմ /13,2 խմ/ պարիսպ, 12,3 քմ հարթակ, 2,9 քմ /6,7 խմ/ պարիսպ եւ 0,0466 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 37140000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Գ. Բաշինջաղյան փողոց, 2-րդ նրբանցք, 8 շենք, 13 հասցեում գտնվող 64,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 28700000 ՀՀ դրամ:
- Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Անդրանիկի փողոց, 5/2 հասցեում գտնվող 105,2 ք.մ. բնակելի տուն, 21,8 քմ ավտոտնակ եւ 0,04 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Խգ Դաշտենցի փողոց, 9/1 հասցեում գտնվող 240,23 ք.մ. բնակելի տուն եւ 0,02430 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 50600000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, Աբովյան ք., Երիտասարդական փողոց, 4 շենք, 25 հասցեում գտնվող 55,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 21900000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Ն. Ստեփանյան փողոց, 60 հասցեում գտնվող 257,1 ք.մ. բնակելի տուն, 94,5 քմ անասնաշենք, 11 քմ կաթսայատուն եւ 0,107 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 26200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Ա. Գրիբոյեդովի փողոց, 19 շենք, 12 հասցեում գտնվող 74,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 46400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Զգ Անդրանիկի փողոց, 141 շենք, 28 հասցեում գտնվող 73,25 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27500000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս ք., Արցախյան խճուղի, 65 հասցեում գտնվող 135,6 ք.մ. սպասարկման տաղավար (ավարտվածության աստիճանը՝ 50-80%) եւ 0.0135 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15330000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Դրոյի փողոց, 4 շենք, 36 հասցեում գտնվող 73,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 38900000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր, Արմավիր ք., Ջիվանու փողոց, 17 շենք, 12 հասցեում գտնվող 81,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20980000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Վանատուր թաղամասի Պուրակային փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 11 հասցեում գտնվող 292,92 ք.մ. բնակելի տուն, 4,59 քմ կաթսայատուն, 33,62 քմ անասնաշենք եւ 0,072 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 40800000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Մեղրաձոր, գյուղ Մարմարիկ, 2-րդ փողոց, 2 հասցեում գտնվող 191,27 ք.մ. բնակելի տուն, 75,22 քմ անասնաշենք, 2,81 քմ կաթսայատուն եւ 0,225 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 33800000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Թբիլիսյան խճուղի, 2 շենք, 26 հասցեում գտնվող 55,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22300000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Հ/Ա Բ-1 թաղամաս 107 շենք 3 հասցեում գտնվող 78,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 33780000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Եղվարդ, գյուղ Ջովունի, 12-րդ փողոց, 28 հասցեում գտնվող 100,5 ք.մ. բնակելի տուն, 26,5 քմ ինքնակամ կառուցված թոնրատուն, 5,5 քմ ինքնակամ կառուցված թռչնանոց եւ 0,04801 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 39600000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Վ. Մամիկոնյան փողոց, 221 հասցեում գտնվող 260,7 ք.մ. բնակելի տուն (317,4 քմ արտաքին մակերեսով) եւ 0,096 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25870000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր 53-րդ փողոց, 6 շենք, 10 հասցեում գտնվող 73,1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 69600000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 18.07.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 19.08.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲիէԹի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուր դի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ

SarGiz-Ի ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Իգիթյանի անվան կենտրոնում (Աբովյան 13) կայացել է նկարիչ, քանդակագործ Գագիկ Սարկիսյանի՝ SarGiz-ի անհատական ցուցահանդեսի պաշտոնական բացումը:

Ցուցահանդեսի ընթացքում արվեստասերները հնարավորություն են ունեցել դիտելու երջանկահիշատակ արվեստագետի մի քանի տասնյակ աշխատանքներ, որոնց շնորհիվ պատկերացում են կազմել SarGiz-ի թողած հարուստ ժառանգության մասին: Իրադարձության նախաձեռնությունը Սարկիսյանի ընտանիքինն է եղել:

Ցուցահանդեսի մուտքն ազատ է: Այն կտեւի մինչեւ հուլիսի 4-ը:

«Արվեստը կրում է ժամանակի բոլոր շերտերի կարեւորությունը, բոլոր ժամանակների մշակութային կապը, մեկը մյուսին լրացնելու կարեւորությունը, ինչպես նաեւ, մեկը մյուսին ժխտելու անսպասելիությունը:

Արծաթը, պղնձի զարդանախշերը ստանում էին պատկերների մի նոր մեկնաբանություն, ստեղծելով կոմպոզիցիաների ներդաշնակ համայնապատկեր: Գույնը, գիծը, թափանցիկ միջնադարյան հայացքները, մաշված որմնանկարների ոսկեպատ լույսը շշնջում են Աստծո խորհուրդների գանձարանում, պատկերները ստանում են մի նոր երանգ, կարեւորություն հաղորդելով արվեստին: Եթե արվեստը մարդու հոգու հայելին է, ապա Գագիկի ստեղծած արվեստում մենք մասնակցում ենք նրա անսահման սիրո զգացմունքների արտահայտմանը, որոնք կմնան իբրեւ արվեստի գլուխգործոցներ իր ժամանակի ու ժամանակից դուրս տիեզերական լռության ներքո...»,- Գագիկ Սարկիսյանի մասին նշել է նրա ընկեր, նկարիչ Արմեն Խոջոյանը:

«Ապշեցուցիչ էր արհեստի ցանկացած տեսակում նրա աշխատելու կարողությունը: Բայց ավելի զարմանալի էր, երբ նրա արհեստը օգնության էր հասնում արվեստին: Թերթավոր պղնձից թեթեւ, մի շնչով արված անհավանական բարդության քանդակները, իդեալական ըստ մտահղացման եւ իրականացման: «Տրոյական նժույգը» հիասքանչ եւ բացառիկ կոմպոզիցիան ապշեցնում է իր բացարձակ գեղագիտությամբ: Հիանալի են կենդանիների պղնձե քանդակները՝ ցլի, խոյի, քարայծի: Տարօրինակ եւ արտասովոր է «Խաղաղաբերը» քանդակը: Կոլաժները: Դա նույնպես «Մեծ մարդու» գործ է: Կիրառել հինավուրց առարկաները, կահկարասին, փայտի ճաքերով կտորները, պղնձե թասերն ու գավերը, եւ այդ իրենց դարն ապրած առարկաներից ժամանակակից, կենսաշունչ եւ արդեն ժամանակային շրջանակներից դուրս ինչ-որ բան արարելը՝ ահա եւս մի նվաճված նպատակ, եւս մի գրավված ուղի: Գեղանկարչությունը: Բազում մտքեր, իրականացված տարակերպ կտավներում՝ գունավոր Բուդդաները եւ ցնորական բնանկարները: Իր թոռների քնքուշ եւ զարմանալիորեն գորովալից խմբանկարը: Թեթեւություն եւ բարդություն, գաղտնիք եւ ցանկացած հայացքի համար բաց գաղափար ահա անհամատեղելիի համատեղումը նրա նկարներում», - այսպես է բնութագրել SarGiz-ի արվեստը նկարիչ Աննա Ադիյանը:

Նշենք, որ Գագիկ Սարկիսյանը ծնվել է 1957 թ.: 1979 թ. ավարտել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը: 1984-1992 թթ. աշխատել է Հնությունների վերականգման կոմիտեում, որպես փայտամշակման արվեստանոցի ղեկավար: Աշխատանքներ է իրականացրել Երեւանում, Աշտարակում, մասնակցել է Հառիճի եկեղեցու ձեւավորմանը: 1993 թ. հրավիրվում է Մոսկվա «Ուսադյբա Վալուեվա» վերականգման աշխատանքների մասնակցելու: 2000 թ.-ից մասնակցում է Սանկտ-Պետերբուրգում հայ նկարիչների ցուցահանդեսներին: 2005 թ.-ից սկսած մասնակցում է Մոսկվայում «Արտմանեժ» ցուցահանդեսին: 2006 թ.-ից մասնակցում է ՌԴ պատմության թանգարանում Հ. Իգիթյանի կազմակերպած ցուցահանդեսին: 2021 թ. հրավիրվում է «Մաչանենց» միջազգային սիմպոզիումին: Մահացել է 2023 թ.:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՎԵՐԱԿԱՆԳՆՎԻ ՍԲ. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Թուրքիայի արեւելյան Դիարբեքիր նահանգի Սուրի շրջանի Ալի Փաշա թաղամասում գտնվող Սուրբ Սարգիս հայկական եկեղեցին կվերականգնվի, հայտնում է ermenihaber.am-ը:

Հունիսի 28-ին Պոլսո Հայոց պատրիարքարանի կողմից մեկնարկել են 508 տարվա պատմություն ունեցող եկեղեցու վերականգնման աշխատանքները: Այդ նպատակով Թուրքիայի մշակույթի նախարարությունը հատկացրել է միայն 5 մլն լիրա, չնայած, որ ըստ հաշվարկների, վերականգնման համար ավելի մեծ գումար է անհրաժեշտ:

Աշխատանքները մեկնարկել են Պոլսո Հայոց պատրիաք Սահակ Բ Մաշալյանի բարձրացրած աղոթքից հետո:

Նշենք, որ եկեղեցին Օսմանյան կայսրության տարիներին ծառայեցվել է որպես արհեստագործական դպրոց: Հայոց ցեղասպանության ոճրագործությունից հետո եկեղեցին ոչ կրոնական, ոչ այլ նպատակների համար չի օգտագործվել եւ այժմ գտնվում է ավերված վիճակում:

ԿՍՏՈՐԱԳՐՎԻ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Հակամարտության գոտիներում պատմամշակութային ժառանգության պաշտպանության միջազգային դաշինքի (ALIPH) միջեւ կստորագրվի փոխըմբռնման հուշագիր:

Հուշագիրը կստորագրեն ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ Հակամարտության գոտիներում պատմամշակութային ժառանգության պաշտպանության միջազգային դաշինքի (ALIPH) գործադիր տնօրեն Վալերի Ֆրելանը:

Փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է Հակամարտության գոտիներում պատմամշակութային ժառանգության պաշտպանության միջազգային դաշինքի (ALIPH) աջակցությամբ իրականացնել ՀՀ Արմավիրի մարզի Բագարանի Սբ Շուշան (7-րդ դ.,), Տավուշի մարզի Չինարի գյուղի Խորանաշատ վանական համալիրի (1211 թ.) եւ Հայաստանի պատմության թանգարանի Սիսիանի մասնաճյուղի ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքները:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՆՈԱ»-ՅԻՆ» Է ՄԻԱՑԵԼ ՄԱԹԵՈՒՍ ԱՅԱՍԸ

Բրազիլացի հարձակվողը հայրենի «Պրոնտե Պրետայի» սան է, կարիերայի մեծ մասն անցկացրել է Իսպանիայում ու Անգլիայում: 2017 թվականին տեղափոխվել է Իսպանիա, որտեղ խաղացել է «Գրանադայի» 2-րդ թիմում:

Իսպանական թիմերից Այասը հանդես է եկել «Ֆուենլաբրադայում», «Վալենսիա Մեստալիայում», «Միրանդեսում», «Ռեալ Օվեդոյում», «Ռասինգում»: Անգլիական ակումբներից խաղացել է «Ուոթֆորդի» մինչեւ 23 տարեկանների թիմում: Իսպանական 2-րդ լիգայում Հայաստանի փոխչեմպիոնի նորեկն անցկացրել է 87 խաղ ու դարձել 11 գոլի հեղինակ: 27-ամյա ֆուտբոլիստը «Նոա» է տեղափոխվել Պորտուգալիայի բարձրագույն լիգան ներկայացնող «Մորեիրենսեից»:

«Շատ ուրախ եմ «Նոայի» հետ նոր ճանապարհ սկսել: Ակումբի մի մասնիկը լինելու համար պետք է գերազանցել սեփական սահմանները եւ միասնաբար հասնել բարձունքների», - երեւանյան թիմին միանալուց հետո ասել է բրազիլացի հարձակվողը:

ՖԻԴԵ-Ի ՆՈՐ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ 7 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Շախմատի միջազգային ֆեդերացիան՝ ՖԻԴԵ-ն, հրապարակել է հուլիս ամսվա դասակարգման աղյուսակը:

Տղամարդկանց դասակարգման աղյուսակում Հայաստանն ունի 4 ներկայացուցիչ: Հայկ Մարտիրոսյանը 66-րդ հորիզոնականում է, Շանթ Սարգսյանը՝82-րդ, Գաբրիել Սարգսյանը՝90-րդ, Հրանտ Մելքումյանը՝91-րդ:

Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականի նախկին առաջատար Լեւոն Արոնյանն, ով այժմ հանդես է գալիս ԱՄՆ դրոշի ներքո, դասակարգման աղյուսակում 18-րդն է:

Կանանց վարկանիշային աղյուսակում էլինա Դանիելյանը 60-րդ տեղում է, Աննա Սարգսյանը՝ 75-րդ, Լիլիթ Մկրտչյանը՝77-րդ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԻՊԼՈՄԻ ԿՈՐՍՏԻ ՄԱՍԻՆ

Ես՝ Մարգարիտա Եգանյանս, 2023 թվականի դեկտեմբերի 27-ին Քանաքեռ-Զեյթուն վարչ. շրջանում կորցրել եմ Երեւանի պետական հենակետային բժշկական քոլեջի՝ 24.06.2021 թվականին ստացած թիվ AK 173103 դիպլոմս՝ «քույրական գործ» մասնագիտությամբ: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 77 467 859 հեռախոսահամարով:

● *Հուլիսի 7-ին՝ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Վերջին ծաղրածուն» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝2000-4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ընդգրկվել որակավորված ներքին աուդիտորների ցանկում:

Հարութ Ստեփանյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկվելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն կարող են դիմում ներկայացնել այն անձինք, որոնք ունեն Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի միջազգայնորեն ճանաչված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորումը (Certified Internal Audit- CIA) կամ հանրային հատվածի աուդիտորի որակավորումը (Certified Government Auditing Professional - CGAP),

2) որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) կողմից անցկացված առնվազն բազային (ֆունդամենտալ) 9 քննության (F1-F9) արդյունքում տրված հաշվապահ-աուդիտորի որակավորումը,

3) հանրային ֆինանսների եւ հաշվապահության արտոնագրված ինստիտուտի (Chartered Institute of Public Finance Accountancy: CIPFA) կողմից տրված որակավորումը,

4) որակավորված հանրային հաշվապահների ամերիկյան ինստիտուտի (American Institute of Certified Public Accountants) կողմից տրված հանրային հաշվապահի որակավորումը (CPA):

Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի այլ կառույցների կողմից տրված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորումը,

2) Հայաստանի Հանրապետության հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիայի (ՀՀԱԱ) կողմից տրված աուդիտորի որակավորումը:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ դիմումին կից պետք է ներկայացնել՝

- անձնագրի պատճենը,
- համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- հայտարարություն:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ է Կենտրոնական բանկի անկախությունը, եւ ինչպե՞ս է այն չափվում:

Աշոտ Գեւորգյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գների կայունության ապահովման համար ինստիտուցիոնալ կարեւոր նախապայման է ԿԲ-ների անկախությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ԿԲ-ների անկախությունը (գործառնական) նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վարկունակությանը՝ մեծացնելով շուկայի արձագանքը ԿԲ ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ԿԲ-ի անկախության եւ ցածր գնաճի միջեւ ուղղակի կապ:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով տարբերակում են ԿԲ-ի անկախության երեք աստիճան՝

- նպատակի սահմանման,
- նպատակային ցուցանիշի սահմանման,
- գործառնական:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ահա հավելյալ՝ այսպիսի «խիստ» գնացուցակ է գործում մեքենաների գազի բալոնների ստուգման կետերից մեկում: Համենայնդեպս, վարպետը, կարծես թե, հումորով մասնագետ է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 12 +25 + 29
Կոտայքի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 19+ 21 +30 + 33
Գեղարքունիք	+ 7+ 11 +24 + 28
Լոռի	+ 9 + 14 +25 + 28
Տավուշ	+ 14+ 19 +29 + 33
Արագածոտնի լեռներ	+ 7 + 9 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20 +29 + 33

Արարատ	+ 19 + 21 +34 + 36
Արմավիր	+ 18+ 20 +34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 19 +33 + 35
Սյունիքի հովիտներ	+ 18 + 21 +31 + 34
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16 +25 + 28
ԼՂՀ	+ 12 + 15 +24 + 26
Երեւան	+ 22 + 24 + 32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Դանիելյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*